ԱԿՏ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐՆԱԽՈՐՀՐԴԻ (SENATE)

2025 թվականի մայիսի 26

Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ իրականացված ցեղասպանության հետևանքների վերացման, ժառանգական իրավունքների և նյութական վնասի հատուցման վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ 1919 թվականի հունվարի 18-ին Առաջին համաշխարհային պատերազմը սկսած և դրա համար մեղավոր ճանաչված երկրները պարտավոր են իրականացնել պատճառված նյութական վնասի հատուցումը՝ համաձայն Վնասի հատուցման հանձնաժողովի (The Commission on Reparations of Damage / Valuation of Damage) եզրակացության,

Ընդունելով, որ պատմության անաչառ վերլուծությունը և հատուցումը ժողովուրդների հաշտության ամենակարևոր հիմքերն են, սակայն հարաբերությունները երկու կողմերի և պետությունների միջև շարունակում են մնալ լարված և իրարամերժ,

Խորին հարգանքով կանգնելով Օսմանյան կայսրությունում և նրան հաջորդող հանրապետական Թուրքիայում 1800-1923 թվականներին տեղի ունեցած ծրագրային և շարունակական ցեղասպանության զոհ դարձած բնիկ հայ ժողովրդի և Հայկական բարձրավանդակում բնակեցված մյուս ժողովուրդների իրավահաջորդների և ժառանգների հիշատակի առջև,

Ճանաչելով, որ հայ ժողովրդի ճակատագիրը զանգվածային բնաջնջումների, բռնի տեղահանությունների և ցեղասպանությունների դառը օրինակ է, որը դարձավ 20-րդ դարի առաջադեմ քաղաքակրթությունների պարտությունը,

Հաստատելով, որ Օսմանյան կայսրության և նրան հաջորդող հանրապետական Թուրքիայի կառավարություններն իրենց գործողություններով և անգործությամբ գրեթե ամբողջությամբ ցեղասպանության են ենթարկել Հայկական բարձրավանդակում ապրող բնիկ հայ ազգին, ինչպես նաև իրենց տիրապետության տակ գտնվող քրիստոնյա և այլ հավատքի փոքրամասնություններին՝ արամեական-ասորական և քրիստոնյա քաղդեական ցեղային խմբերին, հրեաներին, զազաներին, ալևիներին, մալականներին (բողոքական սլավոններ),

Արձանագրելով, որ ըստ 1856 թվականի մարդահամարի տվյալների՝ Օսմանյան կայսրությունում ապրում էին 35,350,000 հպատակներ, իսկ 1914 թվականին բնակչությունը կազմում էր մոտ 18,000,000 մարդ, որից թուրքերը՝ մոտավորապես 4,600,000 մարդ կամ բնակչության մոտ 25%-ը, իսկ 13,400,000 մարդ կազմում էր ոչ թուրք և մահմեդական բնակչությունը կամ մոտ 75%,

Հիշեցնելով, որ Երիտթուրքական վարչակարգի հրամանով 1915 թվականից սկսվեց հայության համակարգված կալանավորումը և աքսորը, մտավորական սերուցքի՝ գրողների, ֆինանսական և տնտեսվար այլ լծակների, առևտրի և արդյունաբերության, արհեստավորների և նրանց առաջնորդների, քաղաքական, պետական և հասարակական հայ գործիչների, պատգամավորների և հոգևորականների գլխատումը,

Կոչ անելով համայն քաղաքակիրթ մարդկությանը՝ ոչ միայն հարգել ցեղասպանության ենթարկվածների հիշատակը, այլև վերականգնել Հայկական բարձրավանդակի բնիկների՝ հայերի և մյուս ցեղասպանված ու աքսորի և զանգվածային սպանությունների ենթարկվածների ժառանգների իրավունքները,

Հաշվի առնելով Գերմանիայի պատմական փորձը Հոլոքոստի ճանաչման և դրա համար իրավական ու նյութական պատասխանատվության կրելու հարցում,

Ակնկալելով, որ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Գերմանիան կընդունեն սույն ԱԿՏ-ը և գործնական քայլեր կձեռնարկեն ցեղասպանության հատուցման և հայրենատիրության ուղղությամբ,

Ափսոսանք հայտնելով Օսմանյան կայսրության և Երիտթուրքական վարչակարգի անփառունակ դերի, ինչպես նաև Բրիտանական, Ռուսական, Գերմանական կայսրությունների, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի ստանձնած առաքելությունների համար, որոնք չնայած դիվանագետներից և միսիոներներից ստացված ոչ երկիմաստ տեղեկատվությանը, չփորձեցին կանխել այդ քաղաքակրթական հանցագործությունները,

Հաստատելով և ճանաչելով, որ հայ ժողովուրդը և այսօր ապրող յուրաքանչյուր հայ Օսմանյան կայսրության, Երիտթուրքական վարչակարգի և Թուրքիայի ինքնահռչակ Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև հայապատկան բռնազավթված տարածքների վրա ինքնահռչակված Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականության թիրախ է, իսկ Արցախի կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչությունը՝ զոհ,

Դիմելով Մեծ Բրիտանիային, Ռուսաստանին, Ֆրանսիային, Գերմանիային և ԱՄՆ-ին՝ հանել հայ ժողովրդի վրայից զոհի պիտակը և վերականգնել հայ ազգի քաղաքակրթական իրավունքները,

Խոնարհաբար հարգանքի տուրք մատուցելով բոլոր նրանց և նրանց ժառանգներին, ովքեր անցել են աներևակայելի դաժան զոհողությունների ճանապարհով և փրկվել, ինչպես նաև որբ մնացած և որբանոցներում, օտար ափերին ծվարած ավելի քան 200,000 ազգությամբ հայ երեխաների հիշատակին,

Կարևորելով բարձրագույն ամբիոններից դպրոցական, համալսարանական և այլ համակարգերի առջև դրված խնդիրը՝ ուսումնական ծրագրերում և նյութերում ներառել հայերի տեղահանման և ցեղասպանության հարցի ուսումնասիրությունը, ինչպես նաև 20-րդ դարի հակամարտությունների պատմության ուսումնասիրությունը՝ ներկա էթնիկ հակամարտությունները հանգուցալուծելու և հետագա սերունդներին պատմական, քաղաքական և նյութական պարտավորություններից ազատելու նպատակով,

Շեշտելով, որ արևմտյան բարձր քաղաքակրթական երկրներում հայ-թուրքական հակամարտությունը հանգուցալուծելու, հետագա սերունդներին պատմական, քաղաքական, նյութական պարտավորություններից ազատելու համար հավաքական հայ ազգը մերժում է հավերժական զոհի կարգավիճակը, իսկ թուրք ժողովուրդը՝ հավերժական դահիճի կարգավիճակը,

Ընդգծելով, որ Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Ֆրանսիան, ԱՄՆ-ը և Գերմանիան կարևոր դեր ունեն այս հարցում, և հայ ազգի ու թուրք ժողովրդի կարգավիճակի փոփոխությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով Գերմանիայի պատմական, քաղաքական և իրավական փորձը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, այդ թվում՝ նրա միջնորդությունը խաղաղ համակեցության հաստատման գործում,

Ողջունելով Թուրքիայում գիտության, քաղաքացիական հասարակության, արվեստի և մշակույթի ոլորտներում հայերի դեմ հանցագործությունների բացահայտմանը և հայերի ու թուրքերի միջև հաշտեցմանը ուղղված նախաձեռնությունների աճն ու ներդրումը, և նշելով, որ հաշտեցումը անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով մարդու իրավունքները, պետությունների ինքնիշխանությունը և կողմերի արդարության ու արժանապատվության ընկալումները,

Հաստատելով, որ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի ներկայացուցիչների կողմից մերձեցման փորձերն ու միջպետական հարաբերությունների կարգավորումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ համաշխարհային հայությունն ազդեցիկ և բարեկամ երկրների օգնությամբ կստանա հատուցում և հայրենադարձության իրավունք (համաձայն ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թվականի նոյեմբերի 22-ի «Իրավարար վճռի», որն անբեկանելի, անժամանցելի փաստաթուղթ է, պարտադիր է կատարման համար, ուժի մեջ է

մտել հրապարակման պահից), և դուրս կգա հավերժական զոհի, իսկ թուրքերը՝ հավերժական դահիճի կարգավիճակից,

ՈՐՈՇԵՑ՝

1. **Ճանաչել ցեղասպանությունը.** Ճանաչել Օսմանյան կայսրությունում և Հանրապետական Թուրքիայում 1800-1923 թվականներին հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների (ներառյալ արամեական-ասորական, քրիստոնյա քաղդեական ցեղային խմբերի, հրեաների, զազաների, ալևիների, մալականների) նկատմամբ իրականացված ծրագրային և շարունակական ցեղասպանությունը, որը հանգեցրել է զանգվածային բնաջնջումների, բռնի տեղահանությունների և անհերքելի մարդկային ու նյութական կորուստների:
2. **Պահանջել հատուցում և իրավունքների վերականգնում.** Պահանջել Թուրքիայի Հանրապետության իշխանություններից վերականգնել ցեղասպանության զոհերի ժառանգորդների և իրավահաջորդների ժառանգական իրավունքները և անհապաղ սկսել նյութական վնասի լիարժեք հատուցման գործընթացը՝ հաշվի առնելով 1919 թվականի հունվարի 18-ի (The Commission on Reparations of Damage / Valuation of Damage) դրույթները և ԱՄՆ-ի 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թվականի նոյեմբերի 22-ի «Իրավարար վճիռը»:
3. **Խրախուսել երկխոսություն և հաշտեցում.** Խրախուսել Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների ներկայացուցիչներին դուրս գալ առկա լճացումից, խուսափել հայ-թուրքական հարաբերությունների հետագա առճակատումից և հաստատել կառուցողական երկխոսություն՝ հիմնված պատմական ճշմարտության, փոխադարձ հարգանքի և արդարության սկզբունքների վրա:
4. **Ձեռնարկել գիտական, հասարակական և մշակութային միջոցառումներ.** Նախաձեռնել և իրականացնել գիտական, հասարակական և մշակութային միջոցառումների համալիր շարք՝ ուղղված թուրք և հայ հասարակությունների միջև փոխըմբռնմանը, հաշտեցմանը և պատմական անցյալի անաչառ ուսումնասիրությանը:

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Ա. Մկրտչյան

Գերմանիա